ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅՈՒՆ

ՎԱՅՈՑ ՁՈՐԻ ՄԱՐԶՊԵՏ

ՈՐՈՇՈՒՄ

ք. Եղեգնաձոր

N 100 ,,14,, ապրիլ 2025թ.

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՎԱՅՈՑ ՁՈՐԻ ՄԱՐԶՈՒՄ ՀՐԱՄԱՆԱՏԱՐԱՇՏԱԲԱՅԻՆ ՈՒՍՈՒՄՆԱՎԱՐԺՈՒԹՅՈՒՆ ԱՆՑԿԱՑՆԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Ղեկավարվելով Հայաստանի Հանրապետության նախագահի 1997 թվականի մայիսի 6-ի ՆՀ-728 հրամանագրի 1.6 կետով և Հայաստանի հանրապետության կառավարության 2015 թվականի հունվարի 22-ի թիվ 46 որոշման հավելված 2-ի 3-րդ կետով, հիմք ընդունելով Հայաստանի Հանրապետության Վայոց ձորի մարզպետի կողմից 2024 թվականի դեկտեմբերի 16-ի թիվ 399-Ա որոշումով հաստատված <<Վայոց ձորի մարզի արտակարգ իրավիճակներում բնակչության պաշտպանության և քաղաքացիական պաշտպանության համակարգերի նախապատրաստման 2025թ. հիմնական միջոցառումների>> պլանի ՀՀՎայոց ձորի մարզում անցկացվող միջոցառումների 1.1.1 կետը՝

Որոշում եմ՝

1. 2025 թվականի մայիսի 13-ին իմ ղեկավարությամբ Հայաստանի Հանրապետության Վայոց ձորի մարզում անցկացնել հրամանատարաշտաբային ուսումնավարժություն «Բնակչության պաշտպանության միջոցառումների իրականացումը ուժեղ երկրաշարժի դեպքում» թեմայով:

2. Նշանակել՝

1) ուսումնավարժության ղեկավարման շտաբի պետ՝ Վայոց ձորի մարզային փրկարարական վարչության պետ, փ/ծ գնդապետ Հ. Սարգսյանին

3. Ստեղծել ուսումնավարժության ղեկավարման շտաբ հետևյալ կազմով

1) խաղարկման խումբ

ա. խմբի ղեկավար՝ Վայոց ձորի մարզային փրկարարական վարչության պետի տեղակալ, փ/ծ գնդապետ Հ. Մարգարյան

բ. խմբի անդամ՝ Վայոց ձորի մարզային փրկարարական վարչության ճգնաժամային կառավարման կենտրոնի ավագ հրահանգիչ, փ/ծ լեյտենանտ Է. Սարգսյան

2) վերլուծության նախապատրաստման խումբ

ա. խմբի ղեկավար՝ Վայոց ձորի մարզային փրկարարական վարչության ճգնաժամային կառավարման կենտրոնի պետ, փ/ծ մայոր Ս. Թադևոսյան

բ. խմբի անդամ՝ Վայոց ձորի մարզային փրկարարական վարչության ճգնաժամային կառավարման կենտրոնի ավագ հրահանգիչ, փ/ծ լեյտենանտ Ժ. Սարգսյան

3) գործնական միջոցառումների կազմակերպման խումբ

ա. խմբի ղեկավար՝ Վայոց ձորի մարզային փրկարարական վարչության Եղեգնաձորի հրշեջ փրկարարական ջոկատի հրամանատար, փ/ծ փոխգնդապետ Ս. Հարությունյան

բ. խմբի անդամ՝ Վայոց ձորի մարզային փրկարարական վարչության ճգնաժամային կառավարման կենտրոնի ՕՀՀ ավագ հրահանգիչ, փ/ծ մայոր Ն. Մկրտչյան

3) միջնորդական խումբ

ա. խմբի ղեկավար՝ Վայոց ձորի մարզային փրկարարական վարչության բնակչության պաշտպանության բաժնի պետ, փ/ծ փոխգնդապետ Վ. Գրիգորյան

բ. խմբի անդամ՝ Վայոց ձորի մարզային փրկարարական վարչության բնակչության պաշտպանության բաժնի հրահանգիչ, փ/ծ մայոր Ա. Մուրադյան

գ. խմբի անդամ՝ Վայոց ձորի մարզային փրկարարական վարչության ճգնաժամային կառավարման կենտրոնի ավագ հրահանգիչ, փ/ծ մայոր Տ. Սահակյան

4. Ուսումնավարժությանը ներգրավվում են՝

1) Վայոց ձորի մարզպետի աշխատակազմը

2) արտակարգ իրավիճակների և տարահանման հանձնաժողովները

3) Վայոց ձորի մարզային փրկարարական վարչությունը

4) Մարզային ծառայությունները

5) Ազգային անվտանգության Վայոց ձորի մարզային վարչությունը

6) ԿԽԸ Վայոց ձորի մասնաճյուղը

7) Եղեգնաձոր համայնքը

5. ՈՒսումնավարժության ղեկավարման շտաբի պետ՝ փ/ծ գնդապետ Հ. Սարգսյանին

1) ապահովել անցկացման փաստաթղթերի ժամանակին մշակումը և մինչև 2025թ. ապրիլի 14-ը ներկայացնել հաստատման

2)կազմակերպել ուսումնավարժությանը ներգրավվող պաշտոնատար անձանց նախապատրաստումը՝ համաձայն հաստատված օրացուցային պլանի

3)ապահովել համագործակցությունը ուսումնավարժության մասնակիցների հետ ուսումնավարժության անցկացման հարցերով

4)ուսումնավարժության անցկացմանը պատրաստ լինելու մասին զեկուցել 2025 թվականի մայիսի 7-ին:

5) ճշգրտել համայնքի, բնակավայրերի և կազմակերպությունների կողմից հատկացվող ուժերն ու միջոցները,

6) համայնքի ղեկավարի և բնակավայրերի վարչական ղեկավարների հետ ուսումնասիրել հավանական իրավիճակը,

6. Ուսումնավարժության մասնակիցներին՝

1) ուսումնավարժության նախապատրաստման հարցերով համագործակցել ուսումնավարժության ղեկավարման շտաբի հետ

2) ճշգրտել համապատասխան պլանները, համալրել անձնակազմերը համապատասխան գույքով և հանդերձանքով,

3)պատրաստ լինել ուսումնավարժության ղեկավարին զեկուցելու ուսումնավարժության ընթացքում կատարված միջոցառումների մասին:

4) Գործնական միջոցառումների իրականացման ընթացքում խստագույնս պահպանել անվտանգության կանոնները:

7. Սույն որոշման կատարման հսկողությունը վերապահում եմ ինձ:

8. Սույն որոշումը հայտարարել ըստ առնչության:

Կ. Միքաելյան